GrCF2 W2 (ԿՔ 2) – Երևանի ավտոբուսների ծրագիր

| | |
|---|---|
| Երկիր՝ | ՀԱՅԱՍՏԱՆ |
| Ծրագրի համարը՝ | 51749 |
| Բիզնես ոլորտ՝ | Ենթակառուցվածքներ Եվրասիայում |
| Պետական/մասնավոր՝ | Պետական |
| Բնապահպանական կատեգորիա՝ | Բ |
| Խորհրդի նիստի նախատեսված ամսաթիվը | 9 Նոյեմբերի 2021 թվական |
| Կարգավիճակը՝ | Հաստատված |
| Ծրագրի ամփոփ փաստաթղթի հրապարակման ամսաթիվը՝ | 17 փետրվար 2020 |

Ծրագրի նկարագրությունը

Մինչև 20 միլիոն եվրո սուվերեն վարկ Հայաստանի Հանրապետությանը, որը կհամաֆինանսավորվի Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և բնապահպանական գործընկերության կողմից 5 միլիոն եվրո ներդրումային դրամաշնորհով ("E5P")։ Վարկային միջոցներով ու դրամաշնորհով կֆինանսավորվի նոր, ժամանակակից, 12 մետր երկարությամբ, ցածր հատակով, սեղմված բնական գազով («ՍԲԳ») աշխատող 100 ավտոբուսների գնումը Երևան քաղաքի համար (Քաղաք) (Ծրագիր)

Ծրագրի նպատակները

Այս ծրագիրն ավելի լայնածավալ ծրագրի մի մաս է, որի նպատակն է օժանդակել քաղաքապետարանին իր հասարակական տրանսպորտի համակարգը վերափոխելու գործընթացում՝ ֆինանսավորելով ավտոբուսների պարկի նորացումը՝ ավտոբուսների ցանցը վերակառուցելու ակնկալիքով։

Ծրագրի արդյունքում կբարելավվի հանրային տրանսպորտի հուսալիությունը, անվտանգությունն ու արդյունավետությունը, իսկ ՍԲԳ տեխնոլոգիան կնվազեցնի քաղաքային տրանսպորտից առաջացող օդի աղտոտվածությունը, ինչը համահունչ է Բանկի «Կանաչ քաղաքներ» շրջանակին և 2017 թվականին Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրին։

Անցումային ազդեցություն

Ծրագիրը «Կանաչ քաղաքներ 2»-ի («ԿՔ 2») մաս է կազմում և իրենից ներկայացնում է հետագա ներդրում Երևանի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրում («ԿՔԳԾ»)։

ԿՔ 2-ի առաջնային նպատակն է ապահովել շրջակա միջավայրի էական բարելավում և համապատասխան քաղաքներում խթանել դեպի «կանաչ քաղաք» անցումը։ ԿՔ 2-ը նաև նպատակ ունի ստեղծել համապատասխան կարողություններ և նպաստել համապատասխան քաղաքներում

տարբեր շահագրգիռ կողմերի միջև ավելի լավ համակարգմանն ու որոշումների սատարմանը՝ նպատակային ներդրումների և նախաձեռնությունների կառավարման որակի, շահագործման արդյունավետության և ֆինանսական կայունության բարելավման նպատակով: Այս նպատակներին աջակցում է Երևանի ԿՔԳԾ-ի մշակումն ու իրականացումը՝ հայտնաբերելով և առաջնահերթություն տալով բնապահպանական մարտահրավերներին և դրանց լուծման ուղիներին՝ նպատակային ներդրումների, ծառայությունների և քաղաքականության գործիքների միջոցով: Բանկը նաև կձգտի տրամադրել քաղաքականության վերաբերյալ ավելի հզոր խորհրդատվություն՝ հիմնվելով քաղված դասերի, նպատակային ուսումնասիրությունների և տեխնիկական աջակցության վրա: Ծրագիրը կնպաստի դեպի կանաչ քաղաք անցման որակի բարձրացմանը՝ նվազեցնելով քաղաքային տրանսպորտի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և խրախուսելով անցումը դեպի հասարակական տրանսպորտի համակարգի օգտագործում:

Ընդհանուր անցումային ազդեցությունը բխելու է ծրագրի «կանաչ» և «լավ կառավարվող» հատկություններից հանրային ծառայությունների պայմանագրի ստորագրմամբ:

**Հաճախորդը**

ՀՀ պետություն

Հայաստանի հանրապետությունը ներկայացնում է Ֆինանսների նախարարությունը: Ծրագիրն իրականացվելու է Քաղաքապետարանի և Ընկերության կողմից:

**ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում**

20,000,000.00 եվրո

Հայաստանի Հանրապետությանը կտրամադրվի 20 միլիոն եվրո սուվերեն վարկ

**Ծրագրի ընդհանուր արժեքը**

25,000,000.00 եվրո

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 25 միլիոն եվրո:

Ծրագիրը կօգտվի նաև տեխնիկական աջակցությունից, որը տրամադրվելու է ծրագրի պատրաստմանն ու իրականացմանն աջակցելու նպատակով:

**Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր**

Ծրագիրը դասվել է Բ կատեգորիայի՝ ըստ 2019 թվականի Բնապահպանական և սոցիալական քաղաքականության: Ներկայիս քաղաքային տրանսպորտի պարկի փոխարինումը ՍԲԳ-ով աշխատող նոր ավտոբուսներով բարենպաստ բնապահպանական և սոցիալական ազդեցություններ կունենա՝ նպաստելով տարեկան 2,939 տոննա ածխաթթու գազի արտանետումների կրճատմանը: Բնապահպանական և սոցիալական ցանկացած հնարավոր անբարենպաստ ազդեցություն կլինի տարածքին բնորոշ և կառավարելի կլինի քաղաքապետարանի հետ ամբողջությամբ համաձայնեցված Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի (ԲՍԳԾ) իրականացման միջոցով:

Բնապահպանական և սոցիալական (ԲՍ) տնտեսատեխնիկական ուսումնասիրությունն իրականացվել է անկախ խորհրդատուի կողմից և ներառել է «Երևանի ավտոբուս» ընկերության ԲՍ աուդիտ՝ ընդգրկելով ԲՍ կառավարման համակարգերն ու պրակտիկաները, ինչպես նաև Ծրագրին առնչվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ու օգուտների վերլուծություն՝ երաշխավորելու, որ ավտոբուսներին և քաղաքային տրանսպորտին ներկայացվող տեխնիկական բնութագրերը համահունչ են ԵՄ պահանջներին: Հաշվի են առնվել նաև Ասիական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող առնչվող կառույցները՝ ավտոբուսի դեպոները: Նախքան ավտոբուսային դեպոների կառուցումը, որը դուրս է ՎԶԵԲ ֆինանսավորման շրջանակից, քաղաքապետարանը պետք է տրամադրի անվտանգության, ապահովության և սանիտարական պահանջներին համապատասխանող պատշաճ տարածք, որը ֆիզիկական և տնտեսական տեղահանում չի պահանջի: Քաղաքը պետք է իրականացնի աղմուկի չափումներ և հիմնվելով աղմուկի չափումների արդյունքների վրա անհրաժեշտ է նվազեցնել գործող սանիտարական պաշտպանության գոտիները դեպոյի շուրջ՝ ապահովելու համար, որ Ծրագիրը համապատասխանում է ազգային կարգավորող նորմերին և 2019 թվականի Բնապահպանական և Սոցիալական Քաղաքականությանը (ԲՍՔ): Այն դեպքում, երբ դեպոյի շրջակայքում ապրող մարդիկ կենթարկվեն բարձր աղմուկի ազդեցությանը, Հաճախորդը կիրականացնի համապատասխան մեղմացնող միջոցառումներ: Տվյալ դրույթները ներառվել են ԲՍԳԾ-ում:

ԲՍ տնտեսատեխնիկական ուսումնասիրությունը հաստատել է, որ Հաճախորդն ընդհանուր առմամբ համապատասխանում է տեղի պահանջներին և ունակ է իրականացնել Ծրագիրը համաձայն ՎԶԵԲ ԳՊ-ի՝ ընկերության ներսում հիմնադրված ԾԻԳ-ի օգնությամբ: Այդուհանդերձ, Ծրագիրը Բանկի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել զգալի բարեփոխումներ ընդհանուր բնապահպանական և անվտանգության կառավարման համակարգերում: Որպես հիմնական անհամապատասխանություններ առանձնացվել են հրդեհային անվտանգությունը և արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը: Ընկերությունը հասցեագրել է հանրային անվտանգության և COVID-19 առնչվող աշխատանքի անվտանգության և առողջության ռիսկերը՝ համաձայն Կառավարության որոշումների: Ընկերությունն իրականացրել է աշխատակիցների և ուղևորների առողջությանն ու անվտանգությանն ուղղված միջոցառումներ՝ բոլոր օբյեկտների ախտահանում, սոցիալական հեռավորության պահպանման զգուշացմամբ ցուցանակներ (ավտոբուսներում գտնվող մարդկանց քանակ և նստատեղերը զբաղեցնելու կարգ, աշխատակիցներից, վարորդներից և ուղևորներից պահանջվում է կրել պաշտպանիչ միջոցներ (ձեռնոց, դիմակ), հնարավորության դեպքում հեռավար աշխատանքի կազմակերպում:

Մշակվել է առկա բացերի վրա կենտրոնացած ԲՍԳԾ: Այն ընդգրկում է մի շարք առաջարկություններ՝ ուղղված հետևյալ ոլորտներին. գործառնական առողջության և անվտանգության կիրառման բարելավում, բնապահպանական կառավարման ասպեկտներ, ISO 14001 և 45001 չափորոշիչներին համապատասխան բնապահպանական և անվտանգության կառավարման համակարգերի մշակում, ԲՍ բոլոր թույլտվությունների և լիազորությունների ձեռքբերում, բնապահպանական և անվտանգության մոնիտորինգի ներդրում, մեքենաները վարելու անվտանգության միջոցառումներ, հրդեհային անվտանգության և ճգնաժամային իրավիճակներին պատրաստվածություն, մասնագիտական վարքագիծ և սեռով պայմանավորված բռնությունների քաղաքականություն, սոցիալական և աշխատանքային կառավարման համակարգեր, այդ թվում՝ բողոքարկման մեխանիզմ, ինչպես նաև շահագրգիռ կողմերի ներգավման պլան: Մշակվել և Հաճախորդի ինտերներտային կայքում հրապարակվել է Ծրագրի ոչ տեխնիկական ամփոփ փաստաթուղթ: Բանկը կվերահսկի Ընկերության գործողությունները ԲՍ տարեկան մոնիտորինգային հաշվետվությունների միջոցով:

https://www.yerevan.am/uploads/media/default/0001/99/e2d7b7390844b622dbfbc6192c059b353296a526.pdf

**Տեխնիկական աջակցություն**

Ծրագրի ստորագրմանը նախորդող տեխնիկական աջակցությունը («ՏԱ») կներառի տեխնիկական, ֆինանսական, բնապահպանական և սոցիալական տնտեսատեխնիկական ուսումնասիրություն, իսկ ստորագրմանը հաջորդող ՏԱ-ն կներառի օժանդակություն Քաղաքապետարանին և Կորպորատիվ զարգացման ծրագրեր: Տեխնիկական աջակցության առաջադրանքների ընդհանուր գնահատված արժեքը կազմում է մինչև 1,1 միլիոն եվրո:

**Առավելությունները**

ՎԶԵԲ-ն առաջարկում է ֆինանսավորում, որը շուկայում մատչելի չէ առևտրային աղբյուրներից ողջամիտ ժամկետներով և պայմաններով, օրինակ՝ վարկի մարման արտոնյալ ժամկետ, սահմանափակ արտարժույթով ֆինանսավորում և այլն: Նման ֆինանսավորումը անհրաժեշտ է սույն ծրագրի կառուցվածքի համար:

Հաճախորդը մտադրված է կիրառել ՎԶԵԲ-ի փորձառությունը՝ բնապահպանական ավելի բարձր ստանդարտների ներդրման, արտանետումների ռիսկերի մեղմացման, կլիմայի փոփոխություններին միտված միջոցների ձեռնարկման, ինչպես նաև գնումների միջազգային լավագույն ստանդարտների ուղղությամբ:

**Հաճախորդի կոնտակտային տվյալները**

Հրաչյա Սարգսյան
Էլ-փոստ՝ newtransport@yerevrn.am
Հեռ.՝ +37411514150,
Երևանի Քաղաքապետարան
Հայաստան, Երևան 0015, Արգիշտի փող. 1

**Անցումային շրջանի ընկալումը**

Այստեղ կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎԶԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

**Բիզնես հնարավորություններ**

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎԶԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168
Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք ՎԶԵԲ-ի գնումներ:

Հեռ.՝ +44 20 7338 6794
Էլ-փոստ՝ procurement@ebrd.com

**Ընդհանուր հարցումներ**

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը:

**Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)**

ԲՍՔ-ն և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎԶԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանել «էկոլոգիապես առողջ և կայուն զարգացումը»: ԲՍՔ-ն և ԳՊ-ները պարունակում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն տեղեկությունների հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դյուրացնելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎԶԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքեն դրանց:

Այս կապակցությամբ ՎԶԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են ԲՍՔ-ում:

**Բարեվարքություն և համապատասխանություն**

ՎԶԵԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀՎԳՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ հեղինակության առումով: Բանկի համոզմամբ, ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են: ՀՎԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետներդրումային փուլերում:

ՀՎԳՏԳ-ն նաև պատասխանատու է ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում կեղծիքի, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ նրանից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են կեղծիքի կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկույց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին էլ-փոստով՝ compliance@ebrd.com: Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն ՀՎԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր զեկույցները, այդ թվում՝ անանուն զեկույցները: Զեկույցները կարող

եք ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով: Տեղեկությունը տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում:

**Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)**

ՏՀՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎԶԵԲ-ը հրապարակայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո նպաստի ՏՀՔ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը: Խնդրում ենք այցելել Տեղեկությունների հասանելիության քաղաքականության կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություն կա ՎԶԵԲ-ի կայքում:

Տեղեկություններ ստանալու համար կարող եք կոնկրետ հարցումներ ներկայացնել՝ օգտագործելով ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը:

**Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՀԱՄ)**

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի՝ Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎԶԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ԾՀԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ԾՀԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է. աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ասպեկտների և հրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, պարզել, արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը կամ իր՝ Տեղեկությունների հասանելիության քաղաքականության՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ քաղաքականություններին վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

Խնդրում ենք այցելել Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը՝ իմանալու ավելին ԾՀԱՄ-ի և նրա լիազորությունների մասին, ինչպես Դիմում ներկայացնել ստուգում անցկացնելու համար, կամ կապ հաստատել ԾՀԱՄ-ի հետ էլ-փոստով ipam@ebrd.com՝ ԾՀԱՄ-ի և դիմում ներկայացնելու վերաբերյալ ուղղորդում և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: